Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
հունիսի 24-ի N 1036 - Ն որոշման

ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են բնակավայրերի սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության վերաձևակերպման հետ կապված հարաբերությունները:

2. ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի N 765-Ն որոշմամբ սահմանված կարգով բնակավայրերի սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվությունը (այսուհետ՝ թույլտվություն) ենթակա է վերաձևակերպման տվյալ բնակավայրերը ներառող համայնքների ղեկավարների (այսուհետ՝ համայնքի ղեկավար) կողմից:

3. Բնակավայրերի սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն ունեցող գովազդակիրը (այսուհետ՝ գովազդակիր) թույլտվությունը վերաձևակերպելու նպատակով՝ համայնքի ղեկավարին ներկայացնում է դիմում (այսուհետ՝ դիմում)՝ համաձայն ձևի:

4. Դիմումին կցվում են՝

1) թույլտվության բնօրինակը.

2) գովազդային վահանակի էսքիզի լուսանկար.

3) տարածքի 2 լուսանկար (10x15 չափսի) տարբեր դիրքերից, որտեղ սխեմատիկ նշված լինի գովազդի դիրքը ճանապարհի նկատմամբ.

4) ճանապարհի պաշտպանական գոտիներում տեղադրելու դեպքում՝ տարածքը տնօրինողի գրավոր համաձայնության պատճենը.

5) եթե դիմումը ներկայացվում է գովազդակրի լիազորված անձի կողմից, ապա օրենքով սահմանված կարգով լիազորագիր և լիազորվածի անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

5. Համայնքի ղեկավարը մերժում է թույլտվության վերաձևակերպումը, եթե ներկայացված փաստաթղթերը թերի են և դրա մասին պատշաճ ձևով նախազգուշացումը համայնքի ղեկավարի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 7 օրվա ընթացքում գովազդակիրը չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը կամ նյութերը:

6. Սույն կարգի 4-րդ կետում նշված փաստաթղթերն ամբողջությամբ ներկայացնելու կամ հավելվածի 5-րդ կետով սահմանված ժամկետում համալրելու դեպքում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում համայնքի ղեկավարն ընդունում է թույլտվության վերաձևակերպման մասին որոշում՝ այդ մասին որոշման ընդունումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով տեղեկացնելով գովազդակրին:

7. Թույլտվության վերաձևակերպման մասին որոշումը գովազդակրին է տրամադրվում թույլտվության բնօրինակի հետ միասին:

Ձև

Հայաստանի Հանրապետության --------մարզի ----------համայնքի ղեկավար

————————————————————ին (անուն, ազգանուն)

Դիմող՝ ————————————————

(ֆիզիկական անձի դեպքում՝ անուն, ազգանուն,

իրավաբանական անձի դեպքում՝ անվանում,

բնակության վայր/գտնվելու վայր, կոնտակտային տվյալներ)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ վերաձևակերպել ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի N 765-Ն որոշմամբ սահմանված կարգով բնակավայրերի սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում արտաքին գովազդ տեղադրելու նպատակով ինձ տրամադրված ———————————————— թույլտվությունը:

Դիմող՝ ————————————————

(ստորագրություն)

անուն, ազգանուն

————————————

(ամսաթիվ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

24.06.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ